

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Սևակ Ճահրազյանի՝ «Ախտաբանական ճարպակալումով հիվանդների ստամոքսի երկայնակի մասնահատման մեթոդով բուժման առանձնահատկությունները եվ կյանքի որակի բարելավման ուղիները» թեմայով ԺԴ.00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նեկայացված ատենախոսության վերաբերյալ

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊԲՀ որովայնային վիրաբուժության ամբիոնի դոցենտ, բժշկական գիտությունների դոկտոր Գագիկ Աշոտի Հանբարձումյան

Այսօր ավելորդ քաշ ունեցող մեծահասակների թիվը գերազանցում է 2,6 միլիարդը, որից 988 միլիոնը (բնակչության մոտ 14%-ը) գեր է: Չնայած ակտիվ ապրելակերպի և ճիշտ սնվելու քարոզչությանը՝ Գիրության համաշխարհային ֆեդերացիայի (World Obesity Federation) 2023 թվականի զեկույցում ներկայացված ճարպակալման տարածման տեմպերը վկայում են դեպքերի կայուն աճի մասին: Փորձագետների հաշվարկներով՝ մինչև 2030 թվականը գիրությամբ կտառապի երկրագնդի բնակչության մոտ 20%-ը: Այս ամենը զգալի անդրադարձ է ունենում պացիենտների սոմատիկ առողջության և կյանքի որակի վրա:

Ստամոքսի լապարոսկոպիկ երկայնակի մասնահատումն (ՍԼԵՄ) ներկայումս դարձել է ամենահաճախակի կատարվող բարիատրիկ միջամտությունն ամբողջ աշխարհում: Չնայած վերջինիս արդյունավետությանը՝ ՄՁԻ-ի նվազեցման, գիրությանը ուղեկցող հիվանդությունների բուժման և պացիենտների կյանքի որակի բարելավման հարցում, ՍԼԵՄ-ը հետվիրահատական բարդությունների առաջացման առումով դեռևս պարունակում է որոշակի ռիսկեր:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ախտաբանական գիրությամբ տառապող մարդկանց բուժման նպատակով ակտիվորեն կիրառվում են բարիատրիկ վիրահատություններ, մասնավորապես՝ լապարոսկոպիկ եղանակով կատարվող ստամոքսի երկայնակի մասնահատում: Սակայն ՀՀ բնակչության շրջանում բուժման կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքների վերաբերյալ վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս գիտականորեն հիմնավորված կարծիք կազմել այս վիրահատությունների արդյունավետության վերաբերյալ: Հաշվի առնելով այս հանգամանքները և խնդրի արդիականությունը՝ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել ՀՀ պոպուլյացիայում բարիատրիկ վիրահատական միջամտությունների կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունքների բազմակողմանի վերլուծություն:

Ատենախոսի կողմից նախաձեռնած հետազոտության նպատակն է ստամոքսի լապարոսկոպիկ երկայնակի մասնահատման եղանակով ախտաբանական ճարպակալումով պացիենտների կյանքի որակի բարելավման գիտական հիմնավորումը, ինչպես նաև՝ համակցված հիվանդություններով պայմանավորված մահացության ցուցանիշների նվազեցումը:

Այս նպատակի իրականացման համար հեղինակը սահմանել է 9 գիտա-կլինիկական նշանակություն ունեցող խնդիր, ինչը համարժեքորեն արտացոլված է սեփական հետազոտությունների արդյունքներին նվիրվախ 3-5 գլուխներում:

Մասնավորապես ուսումնասիրվել և համեմատվել են տարբեր եղանակներով կատարվող ՍԼԵՄ-ի կարճաժամկետ և միջնաժամկետ ազդեցությունը գիրության ցուցանիշների վրա, կատարվել է ՍԼԵՄ-ի տարբեր տեսակների բնութագրիչների համեմատական վերլուծություն, ինչպես նաև գնահատվել է ստանդարտ և մոդիֆիկացված ընթացակարգերով կատարվող ՍԼԵՄ-ի ազդեցությունը տարբեր խմբերի պացիենտների ՄՁԻ-ի, կյանքի որակի և ուղեկցող հիվանդությունների արտահայտվածության ցուցանիշների վրա: Բացի այդ, հետազոտության շրջանակում մշակվել է ԱՃ-ի հետ փոխկապակցված կոմորբիդ վիճակների ծանրության միասնական սանդղակ, ուսումնասիրվել և վերլուծել են ՍԼԵՄ-ի հետվիրահատական բարդությունների ցուցանիշները, տարբեր եղանակներով կատարվող ՍԼԵՄ-ի արդյունքների վրա ազդող գործոնները ինչպես նաև աաջարկվել է բարիատրիկ վիրահատության տեխնիկայի և հետվիրահատական վարման առավել արդյունավետ ընթացակարգ:

Այս նպատակի իրականացման համար հեղինակը սահմանել է ինը գիտակլինիկական նշանակություն ունեցող խնդիր, որոնց լուծումն ամբողջությամբ արտացոլված է սեփական հետազոտությունների արդյունքներին նվիրված աշխատության 3-5-րդ գլուխներում:

Վերոհիշյալ խնդիրները նախկինում կատարված հետազոտություններում համակարգված չեն ուսումնասիրվել, և դրանց լուծումը որոշում է ատենախոսության գիտական նորույթը ու գործնական նշանակությունը:

Հետազոտության արդյունքները և հեղինակի կողմից մշակված գործնական առաջարկությունները լայն կիրառություն կգտնեն բարիատրիկ վիրաբուժությունում, ինչը զգալի դրական ազդեցություն կունենա պացիենտների լայն շրջանակի սոմատիկ առողջության և կյանքի որակի ցուցանիշների վրա:

Ատենախոսությունը գրված է հայերեն լեզվով, շարադրված է համակարգչային տեքստի 220 էջերում, բաղկացած է գրականության տեսությունից, հետազոտության նյութերի և մեթոդների նկարագրությունից, սեփական հետազոտությունների արդյունքներին նվիրված 3 գլուխներից, ամփոփումից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 185 աղբյուր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Աշխատանքը պարունակում է 31 աղյուսակներ, 18 գծապատկերներ:

Հետազոտական աշխատանքը կլինիկական և մեթոդաբանական տեսակետից իրականացված է ճշգրիտ: Հիվանդների ընդգրկումը և հետազոտությունները կատարվել են առաջադրված խնդիրներին համապատասխան:

Նկատողությունների առումով նշեմ հետևյալը.

1. Չնայած հեղինակի կողմից ստացված տվյալների վիճակագրական հանգամանալից մշակմանը, աշխատանքում դրա մեկնաբանությունը պատշաճ կերպով ներկայացված չէ:
2. Հետազոտված պացիենտների վերաբրտադրողական ֆունկցիայի կարգավորմանը վերաբերող արդյունքները նեկայացված չեն եզրահանգումների մեջ՝ չնայաց նշված տվյալների հիման վրա հրապարակված է առանձին հոդված:

3. Հետազոտության շրջանակներում կատարված՝ ախտաբանական ճարապակալման հետ փոխկապակցված հիվանդությունների (հատկապես, շաքարային դիաբետի) ուսումնասիրությունը ներկայացված է միայն արտահայտվածության միջինացված թվերի տեսքով, միջոցառման նպատակահարմար կլիներ ներկայացնել նաև վերջիններիս տեսակարար կշիռների և կոնկրետ ախտանշանների հետզարգացման ավելի խորքային վերլուծություն:

4. Ատենախոսության մեջ առկա են որոշակի տեխնիկական վրիպակներ:

Սակայն վերը նշված դիտողությունները սկզբունքային բնույթ չեն կրում և ոչ մի կերպ չեն նվազեցնում գրախոսվող աշխատանքի արժեքը:

Ամփոփելով գրախոսությունը՝ կարելի է եզրակացնել, որ ատենախոս Սևակ Շահրազյանի՝ "Ախտաբանական ճարապակալումով հիվանդների ստամոքսի երկայնակի մասնահատման մեթոդով բուժման առանձնահատկությունները եվ կյանքի որակի բարելավման ուղիները" դոկտորական ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, ունի գիտագործնական մեծ նշանակություն բարիատրիկ վիրաբուժության մեջ և համապատասխանում է դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին իսկ հեղինակը արժանի է ԺԴ.00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ռնոդիմահոս.
բժշկական գիտությունների դոկտոր՝

25 հունվարի 2026թ.

Համբարձումյան Գ.Ա.

ԵՊԲՀ որովայնային վիրաբուժության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Դ., Գագիկ Աշոտի Հանրաբժումյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊԲՀ գիտական քարտուղար

Բ.Գ.Դ., պրոֆեսոր Տ. Գ. Ավագյան



